Գրքույկը տպագրվել է «Բաց հասարակության հիմնադրամներ - Նյու Յորք»-ի ֆինանսական աջակցությամբ:

OPEN SOCIETY FOUNDATIONS

HELSINKI CITIZENS ASSEMBLY

ԹՄՐԱՄԻՋՈՑԻՑ ԿԱԽՎԱԾՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԵՎ ԱՌԱՋԻՆ ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Յուրաքանչյուր ոք իրավունք ունի Հայաստանի Հանրապետությունում իր միջոցներով, ինչպես նաև անվճար ստանալ բժշկական օգնություն և սպասարկում՝ անկախ ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, տարիքից, առողջական վիճակից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից[1]:

[1] ՀՀ Սահմանադրության 38-րդ հոդված, «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդված

Այն անձը, ով առանց բժշկի նշանակման թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր գործածելու կապակցությամբ բժշկական օգնություն ստանալու համար կամովին դիմել է համապատասխան բժշկական կազմակերպություն, ազատվում է օրենքով սահմանված վարչական պատասխանատվությունից[2]:

ԹՄՐԱՄԻՋՈՑ ԳՈՐԾԱԾՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Թմրամիջոց գործածող անձիք պաշտպանվում են միջազգային նորմերով, ՀՀ Սահմանադրությամբ և ՀՀ օրենսդրությամբ սահմանված մարդու իրավունքներով և ազատություններով:

Թմրամիջոց գործածող անձը բժշկական ծառայությանը դիմելու և բուժօգնություն ստանալու ընթացքում ունի պացիենտի համար սահմանված բոլոր իրավունքներն ու ազատությունները, մասնավորապես՝

- արդյունավետ բուժօգնություն ստանալու իրավունք,
- կանխարգելման իրավունք (հիվանդության կանխման),

[2] «Վարչական իրավախախտումների մասին» ՀՀ օրենսգրքի 44-րդ հոդված

Ձեր խախտված իրավունքների պաշտպանության նպատակով կարող եք անվճար խորհրդատվություն ստանալ՝ դիմելով

Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ

Հասցե՝	Տիգրան Մեծի 59
Վեբ կայք՝	www.hcav.am
Էլ. փոստ՝	hcav@hcav.am
Ֆաքս՝	(+374) 322 41236
Հեռ.՝	(+374) 322 42268
Բջջ.՝	(+374) 094 042268

Թեժ հեռախոսագիծ՝ 08000 1211

- մատչելիության իրավունք (բժշկական ծառայությունները պետք է հավասար մատչելիություն երաշխավորեն բոլորի համար, առանց խտրականության՝ պայմանավորված ֆինանսական միջոցների առկայությամբ, բնակության վայրով, հիվանդության տեսակով կամ բժշկական օգնության դիմելու ժամանակով),
- համաձայնության իրավունք (յուրաքանչյուր ոք իրավունք ունի մասնակցել իրեն տրամադրվող բժշկական օգնությանը վերաբերող ցանկացած որոշման կայացմանը, տալու իր համաձայնությունը, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի),
- պացիենտի ժամանակը հարգելու իրավունք (յուրաքանչյուր ոք իրավունք ունի սահմանված ժամկետում՝ առանց ձգձգումների, ստանալ բուժօգնություն)
- անձնական կյանքի և գաղտնիության պահպանման իրավունք, (յուրաքանչյուր ոք ունի իր անձնական կյանքը հարգելու իրավունք՝ կապված իր առողջական տեղեկությունների հետ, յուրաքանչյուրի առողջական վիճակի վերաբերյալ տեղեկությունները, անգամ նրա մահից հետո, պետք է գաղտնի պահվեն: Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձի անձնական բոլոր տվյալները համարվում են գաղտնի: Այդ տվյալները կարող են միայն հավաքվել, մշակվել և հաղորդվել՝ մասնագիտական գաղտնիքի և անձնական տվյալների հավաքման կանոնների համաձայն),

Հղումներ՝

http: www.antidrug.health.am

http: www.armmedicine.com

http:www.apec.am

http: med-practic.com

ՀՀ Սահմանադրություն

ՀՀ քրեական օրենսգիրք

ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք

Վարչական իրավախախտումների վերաբերյալ

ՀՀ օրենսգիրք

«Թմրամիջոցների և հոգեմետ (հոգենորգործուն)

նյութերի մասին» ՀՀ օրենք:

- նորարարության իրավունք (յուրաքանչյուր ոք իրավունք ունի միջազգային ստանդարտներին համապատասխան նոր դեղամիջոցներով, նորագույն տեխնոլոգիաներոով բուժում ստանալ),
- ոչ անհրաժեշտ ցավից և տառապանքից զերծ մնալու իրավունք (յուրաքանչյուր ոք իրավունք ունի հնարավորինս խուսափել ցավից և տառապանքից)
- տեղեկատվություն ստանալու իրավունք (յուրաքանչյուր ոք իրավունք ունի մատչելի ձևով տեղեկություն ստանալ իր առողջական վիճակի, հետազոտությունների արդյունքների, հիվանդության ախտորոշման, բուժման մեթոդների, դրանց հետ կապված ռիսկի, բժշկական միջամտության հնարավոր տարբերակների, հետևանքների և բուժման արդյունքների մասին),
- բուժման ընթացակարգի և բուժող մարմնի ազատ ընտրության իրավունք, (յուրաքանչյուր ոք իրավունք ունի ընտրել իրեն բուժող բժշկին),
- որակի չափորոշիչների պահպանման իրավունք, (յուրաքանչյուր ոք իրավունք ունի ստանալ որակյալ բժշկական սպասարկում),
- անվտանգության իրավունք (յուրաքանչյուր ոք իավունք ունի բուժաշխատողների անուշադրության և սխալների հետևանքով հասցված վնասից ազատ լինել),
- բուժման անհատական մոտեցման իրավունք (յուրաքանչյուր ոք իրավունք ունի ստանալ իր

Թմրամիջոցներից կախվածություն ունեցող պացիենտների խախտված իրավունքների վերականգնման ուղիները



ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻՑ ԿԱԽՎԱԾՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԻՔ ԿԱՐՈՂ ԵՆ ԲՈՒԺՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼ՝

«Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպան-սեր» ՓԲԸ,
հասցե՝ ՀՀ, ք. Վանաձոր, Գ. Նժդեհի 57,
հեռ.՝ (0322) 2 01 88 կամ 2 41 63,

ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ,
հասցե՝ ՀՀ, ք. Գյումրի, Ղարսի խճուղի 2 ա,
հեռ.՝ (0312) 5 04 28,

«Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր» ՓԲԸ,
հասցե՝ ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Կապան, Բաղաբերդ 48,
հեռ.՝ (0286) 5-37-12

ՀՀ ԱՆ «Հոգեբուժական բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի Ավանի նարկոլոգիական կլինիկա,
հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Աճառյան 2-րդ նրբ, 2-րդ շենք
հեռ.՝ (010) 61 70 90:

Հակաթմրամոլային քաղաքացիական դաշինք ՀԿ
հասցե՝ ք.Երևան, Աճառյան փ, 2-րդ նրբ, շենք 2
հեռ.՝ +374 (10) 621635
էլ. փոստ՝ info@healthrights.am

անհատական կարիքներին համապատասխան բժշկական օգնություն և սպասարկում),

- խոշտանգումներից, դաժան, անմարդկային, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու իրավունք,
- բռնության, ծեծի ենթարկվելու դեպքում՝ անհապաղ դատաբժշկական փորձաքննության նշանակելու պահանջ ներկայացնելու իրավունք,
- ընտանեկան և անձնական կյանքը հարգելու իրավունք,
- բողոքարկման իրավունք (յուրաքանչյուր ոք բուժման ընթացքում առողջությանը պատճառված վնասի դեպքում բողոքարկման իրավունք ունի),
- փոխհատուցման իրավունք (բուժհաստատության գործողությունների արդյունքում անձին ֆիզիկական կամ բարոյական և հոգեբանական վնաս հասցնելու դեպքում յուրաքանչյուրը փոխհատուցման իրավունք ունի):

Եթե թմրամիջոց գործածող անձը **բերման է ենթարկվել կամ նրա նկատմամբ մեղադրանք է առաջադրվել** իրավախախտում կատարելու համար, ապա վերջինս օգտվում է համապատասխանաբար բերման ենթարկվածի, կասկածյալի, մեղադրյալի, դատաքննության փուլում նաև ամբաստանյալի

համար օրենքով սահմանված բոլոր իրավունքներից, մասնավորապես՝

- 3 ժամ բերման ենթարկվածի կարգավիճակում գտնվելու,
- 72 ժամ մեղադրյալի կարգավիճակում գտնվելու,
- 12 ժամվա ընթացքում հարազատին իր գտնվելու վայրի մասին տեղյակ պահելու,
- սահմանված ժամկետում հարցաքննվելու,
- պաշտպան ունենալու, այդ թվում իր միջոցներով կամ միջոցների բացակայության դեպքում հանրային պաշտպանի ծառայությունից օգտվելու,
- լռելու (ցուցմունք չտալու իրավունք),
- իր կամ իր մերձավոր ազգականի դեմ ցուցմունք չտալու,
- խոշտանգումներից, դաժան անմարդկային, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու,
- ծեծից, բռնությունից զերծ մնալու,
- իրեն բերման ենթարկելու կամ առաջադրված մեղադրանքի էությանը ծանոթանալու,
- խուզարկության և առգրավման որոշումներին ծանոթանալու,

Եվ ի վերջո, թմրամիջոցի չարաշահումը հանգեցնում է առողջության քայքայման, նպաստում է վաղաժամ մահվան, պատճառ է հանդիսանում անառողջ (հիվանդություններ ունեցող) սերունդ ունենալուն, ընտանեկան անախորժությունների, ամուսնալուծության, առաջ է բերում քրեական և վարչական պատասխանատվություն:

Թմրամիջոցի ապօրինի գործածման, առանց իրացնելու նպատակի մանր չափերով պահման համար օրենքով սահմանված է **վարչական պատասխանատվություն՝ տուգանք**:

Թմրամիջոցի ապօրինի շրջանառության պահման, պատրաստման, ձեռքբերման, առաքման, փոխադրման, վերամշակման, մշակման, իրացման, առանց իրացնելու նպատակի պահման, պատրաստման, մշակման, վերամշակման համար սահմանված է **քրեական պատասխանատվություն** ընդհուպ պատիժ ազատազրկման ձևով:

ԹՄՐԱՄԻՋՈՑԻ ԳՈՐԾԱԾՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Թմրամիջոցների չարաշահումն անխուսափելիորեն հանգեցնում է կախվածության, որի նշաններից մեկն այն է, որ անհատն աստիճանաբար հեռանում է իր սովորական հետաքրքրություններից կամ զբաղմունքներից: Նա դառնում է անտարբեր իր և իր շրջապատին հուզող խնդիրների նկատմամբ և ամբողջ ժամանակը ծախսում է թմրամիջոցի «փնտրման» և գործածման վրա:

Թմրամիջոցի առաջին իսկ ընդունումը կամ ներարկումը կարող է ունենալ մահացու ելք, քանի որ օրգանիզմի համար դեռևս անսովոր նյութը կարող է դրսևորել սովորականից ավելի մեծ ազդեցություն՝ առաջ բերելով գերդոզավորում: Ոչ ստերիլ ասեղի, ներարկիչի կամ ներարկման պարագաների օգտագործմամբ հնարավոր է նաև սուր բակտերիալ բարդությունների առաջացումը, այդ թվում՝ սուր ֆլեբիտի (երակաբորբ) և սեպսիսի («արյան վարակում») զարգացումը: Ափիոնի մշտական օգտագործումն առաջ է բերում ախորժակի անկման, սեռական հակման նվազեցման, ըմբռնելու և զգուշավորության կորստի, էմոցիոնալ անկայունության և չափից դուրս նիհարման:

- խուզարկության և առգրավման արձանագրության պատճենները քրեական հետապնդման մարմնի կողմից անվճար ստանալու,
- ձերբակալման կամ խափանման միջոց ընտրելու մասին որոշումների պատճենները քրեական հետապնդման մարմնի կողմից անվճար ստանալու և այլ իրավունքներ ու ազատություններ:

ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻՑ ԿԱԽՎԱԾՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

ՀՀ-ում թմրամիջոցների կախվածությունից բուժումը, որը ներառում է հետազոտում, խորհրդատվություն, ախտորոշում, բուժում և բժշկա-սոցիալական վերականգնում, ՀՀ քաղաքացիների համար **անվճար է**, բացառությամբ **անանուն բուժման:**

Թմրամիջոցների կախվածության բուժումը **կամավոր** է, բացառությամբ դատարանի կողմից բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման: **Կամավոր բուժում ստանալու համար անհրաժեշտ է թմրամիջոցներից կախվածություն ունեցող անձի գրավոր դիմումը՝ ուղղված համապատասխան բուժհաստատությանը:** ***Բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կարող են կիրառվել միայն դատարանի որոշմամբ*** այն

անձանց նկատմամբ, որոնք բժշկական հետազոտման արդյունքում ստացել են **«թմրամոլություն» ախտորոշումը,** գտնվում են բժշկական հետազոտության ներքո և առանց բժշկի նշանակման շարունակում են օգտագործել թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր, ինչպես նաև այն անձանց նկատմամբ, որոնք դատապարտվել են հանցագործություն կատարելու համար և բուժման կարիք ունեն:

ՄԻ ՔԱՆԻ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԹՄՐԱՄՈԼՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Թմրամոլությունը պատմականորեն դիտվել է որպես հոգեկան հիվանդություն:

Հոգեկան առողջության տեսանկյունից թմրամիջոցների չարաշահումը հանգեցնում է հոգեկան և վարքային խանգարումների:

Թմրամոլությանը բնորոշ է կախվածությունը, ինչպես նաև զրկանքի (լոմկա կամ թմրասով) համախտանիշը:

ԿԱԽՎԱԾՈՒԹՅՈՒՆ

Կախվածությունը համարվում է սրացումների բարձր ռիսկով և քրոնիկական ընթացքով ծանր հիվանդություն, որը բնորոշվում է մի շարք

նյարդաթելեր, որոնց պատահական վնասումը կարող է հանգեցնել ծանր խանգարումների, օրինակ՝ ձայնալարերի աշխատանքը կարգավորող նյարդաթելերի վնասումը կարող է հանգեցնել խոսքերի արտաբերման կորստի:

ԹՄՐԱՄԻՋՈՑԻ ՆԵՐԱՐԿԱՅԻՆ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-Ի ԵՎ ՀԵՊԱՏԻՏՆԵՐԻ ՎԱՐԱԿՄԱՆ ԱՂԲՅՈՒՐ

Ներարկային եղանակով թմրամիջոց օգտագործողները ենթարկվում են արյան միջոցով տարբեր միկրոօրգանիզմներով վարակվելու վտանգին:

Ներարկային թմրամիջոցների գործածման դեպքում հնարավոր է առաջին ներարկման պատճառով վարակվել ՄԻԱՎ-ով կամ հեպատիտներով: Արյունածին վարակներ ձեռք բերելու վտանգը մեծանում է կրկնակի ներարկումների հետ զուգահեռ: Թմրամիջոցներ և հոգեմետ նյութեր չարաշահողները սովորաբար դրսևորում են վտանգավոր, ռիսկային սեռական վարքագիծ և կարող են իրենց զուգընկերներից վարակվել կամ նրանց վարակել տարբեր սեռավարակներով:

Եթե առկա է ներարկիչի ասեղով զարկերակի պատի պատահական ծակում, ապա անհրաժեշտ է անհապաղ ձեռնարկել հետևյալ միջոցառումները՝

- **անմիջապես ետ քաշել ասեղը և չփորձել ներարկել թմրամիջոցը,**
- ծակած տեղամասը նվազագույնը **15 րոպեի ընթացքում սեղմել ձեռքով** կամ դնել սեղմող վիրակապ,
- հնարավորության դեպքում բարձրացնել և բարձր դիրքում պահել վերջույթը,
- եթե զարկերակի պատի վնասված նշանները չեն մեղմանում, ապա անհրաժեշտ է **կանչել շտապ օգնություն:**

ՊԱՐԱՆՈՑԻ ԵՐԱԿՆԵՐԻ ՆԵՐԱՐԿՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՍՊԱՌՆԱՑՈՂ ՎՏԱՆԳՆԵՐԸ

Պարանոցի շրջանում երակները, զարկերակները, մկանաջլերը և նյարդերը ձգվում են իրար կպած վիճակում: Մեծ է նաև ինֆեկցման և թարախային բարդությունների առաջացման ռիսկը: Պատահաբար զարկերակային ներարկման դեպքում թմրամիջոցն անմիջապես բարձրանում է դեպի ուղեղ, և խիստ բարձրանում է ծանր գերդոզավորման, ուղեղային խանգարումների և անգամ ինսուլտի վտանգը: Պարանոցով են անցնում բազմաթիվ

նշաններով, որոնց մեջ կարևոր նշանակություն ունեն թմրամիջոցների ընդունման անկասելի պահանջը՝ հակումը, տոլերանտությունը և նյութի ազդեցության նվազեցմանը հետևող զրկանքի համախտանիշի զարգացումը:

ԶՐԿԱՆՔԻ ՀԱՄԱԽՏԱՆԻՇ (ԼՈՄԿԱ ԿԱՄ ԹՄՐԱՍՈՎ)

Զրկանքի համախտանիշը զարգանում է երկար ժամանակի ընթացքում և (կամ) բարձր դոզաներով բազմակի գործածվող թմրամիջոցի օգտագործումը կտրուկ դադարեցնելիս կամ դոզան նվազեցնելիս: Եթե թմրամիջոց չարաշահող մարդու մոտ ժամանակ առ ժամանակ առաջ է գալիս զրկանքի համախտանիշ, ապա սա վկայում է թմրամիջոցից անձի կախվածության մասին:

ԱՐՏԱՔՆԱՊԵՍ ԻՆՉՊԵՍ ՃԱՆԱՉԵԼ ԶՐԿԱՆՔԻ ՀԱՄԱԽՏԱՆԻՇԸ

Զրկանքի համախտանիշը դրսևորվում է թմրամիջոց ընդունելու անկասելի ցանկությամբ, բբերի լայնացմամբ, առատ, սառը քրտնարտադրությամբ, գրիպանման հարբուխով և ակամա արցունքահոսությամբ, որոնք ուղեկցվում են լուծով, մկանային և ոսկրային ցավերով, ախորժակի բացակայությամբ, նողկանքով, անզուսպ փսխումնե-

րով, ընդհանուր անհանգստությամբ և անքնությամբ, ոտքերի անհանգիստ շարժումներով:

Հերոինային զրկանքի համախտանիշին հատուկ են նաև զարկերակային ճնշման բարձրացումը, հաճախասրտությունը, շնչառության հաճախացումը և սառը, կպչուն մաշկը:

ԳԵՐԴՈԶԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՆՐԱ ԱՐՏԱՔԻՆ ՆՇԱՆՆԵՐԸ

Գերդոզավորումը (պերեդոզ) ներարկային թմրամիջոց գործածողների շրջանում հանդիպող մահացու ելքով սուր բարդություն է, որն ընթանում է գիտակցության կտրուկ արգելակմամբ՝ ընդհուպ կոմա, որն ուղեկցվում է շնչառության խոր ընկճմամբ և սրտանոթային սուր անբավարարությամբ: Գերդոզավորման ժամանակ զարգանում է քնկոտություն՝ պայմանավորված գլխուղեղի գործունեության արգելակմամբ:

10. եթե տուժողի շնչառությունը և սրտի աշխատանքը չեն վերականգնվում, իսկ շտապ բժշկական օգնության անձնակազմը դեռ չի ժամանել, ապա պետք է սկսել սրտի արտաքին մերսման և բերան-բերան մեթոդով արհեստական շնչառության միջոցառումների իրականացումը,

Ձեր ներշնչած օդի ողջ ծավալը բերանով արտաշնչեք (ներփչեք) տուժողի թոքերը,

11. կատարեք տուժողի սրտի արտաքին մերսում:

ՎՏԱՆԳՆԵՐ, ՈՐՈՆՑԻՑ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ԽՈՒՍԱՓԵԼ….

Ներզարկերակային ներարկման ժամանակ առկա են **թմրամիջոցի անսպասելի հզոր ազդեցության դրսևորման և գերդոզավորման, զարկերակի պատի վնասման, ծավալուն արյունազեղումների և հեմատոմայի առաջացման, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, հեպատիտների վարակման վտանգներ:**

իրականացնել վերակենդանացման միջոցառումներ,

6. **ստուգեք, թե արդյոք աշխատում է տուժողի սիրտը,**

ձեռքի մատներով շոշափեք տուժողի պուլսը քնային (պարանոցի վրա, խնձորակի աջ և ձախ կողմերում) կամ ազդրային զարկերակների վրա (աճուկային փոսի շրջանում),

7. **տուժողին տեղավորեք ամուր հարթ մակերեսի վրա (տանը՝ հատակին, իսկ դրսում՝ գետնին),**
8. **ստուգեք, թե արդյոք տուժողը շնչում է,**
9. **Եթե տուժողի լեզուն կուլ է գնացել, ապա փորձեք օգնել հետևյալ կերպ**
   - պետք է բացել տուժողի բերանը և նրա ստորին ծնոտը քաշել դեպի առաջ (անհրաժեշտ է շոշափել ստորին ծնոտի անկյունները, որոնք գտնվում են ականջի բլթակներից քիչ ներքև, և բռնելով այդ անկյունները՝ ստորին ծնոտը քաշել առաջ),

   ոչ մի դեպքում չի կարելի փորձել տուժողի բերանը բացել գդալով, երկաթյա այլ առարկայով, քանի որ այս դեպքում հնարավոր է վնասել նրա ատամները: Կարող եք վնասել այդ անհատի լնդերը, որոնք արյունահոսելով կխցանեն տուժողի շնչուղիները,

ԻՆՉՊԵՍ ՎԱՐՎԵԼ, ԵՐԲ ԱՌԿԱ Է ԳԵՐԴՈԶԱՎՈՐՈՒՄ

Եթե թմրամիջոցի ընդունումից հետո մարմինը թմրում է և առաջ է գալիս անդիմադրելի քնկոտություն, ապա հարկավոր է.

- ակտիվ կերպով **շփել անձի ականջները** և այտերը, մի ձեռքով ամուր սեղմել մյուս ձեռքի մատների եղնգային մակերեսները և, ընդհանուր առմամբ ակտիվացնել անձին,
- պետք է չքնել,
- վիճակի մասին տեղյակ պահել հարևանությամբ գտնվող անձանց,
- հարկավոր է զրուցել անձի հետ,
- եթե անձը մենակ է, ապա ցանկալի է զրուցել ինքն իր հետ,
- հետևել շնչառությանը և փորձել կարգավորել այն. **շնչել խորը և դանդաղ** ու հանդարտ արտաշնչել, ակտիվ շնչառությունը կնպաստի թթվածնի՝ դեպի ուղեղ և սիրտ հասնելուն,
- անհրաժեշտ է գնալ մի վայր, ուր այլ մարդիկ կան,
- ընդունել մենթոլ պարունակող դեղամիջոց, **մենթոլը խթանում է սրտի աշխատանքը** և շնչառությունը, օրինակ՝ մենթոլ պարունակող

«Վալիդոլ» (լեզվի տակ դրվող հաբեր կամ պատիճներ), մենթոլ պարունակող ծամոնը կամ կոնֆետը կարող են որոշ չափով մեղմացնել գերդոզավորման նշանները:

- **կարող է օգնել հեղուկների առատ ընդունումը,** վերցնել 0,5 լ որևէ հանքային ջուր կամ ոչ ոգելից ըմպելիքներ և դանդաղորեն խմել այն,
- **եթե վիճակը չի բարելավվում, կանչել շտապ օգնություն (1-03)**
- **նույնիսկ եթե վիճակն ինքնուրույն բարելավվում է, պետք է հիշել, որ ինքնազգացողության կտրուկ վատթարացումը կարող է կրկնվել, քանի դեռ օրգանիզմը թմրամիջոցից չի մաքրվել,**
- գերդոզավորման առաջին նշանների ի հայտ գալուց **միայն 2 ժամ անց** կարելի է հույս ունենալ, որ վտանգը մեղմացել է,
- **գերդոզավորմանը հաջորդող մի քանի օրվա ընթացքում պետք է դադարեցնել թմրամիջոցների օգտագործումը:**

Երբեք չփորձել մտնել սառը լոգարան կամ սառը ցնցուղի տակ կամ աղաջուր ներարկվել:

ՀՆԱՐԱՎՈՐ Է ՓՐԿԵԼ ԳԵՐԴՈԶԱՎՈՐՄԱՆ ՊԱՏՃԱՌՈՎ ՄԱՀՎԱՆ ՇԵՄԻՆ ՀԱՅՏՆՎԱԾ ԱՆՁԻ ԿՅԱՆՔԸ, ԵԹԵ…

1. **կանչեք շտապ բժշկական օգնություն (1-03)** կամ խնդրեք ուրիշին, որ կանչի,
2. գնահատեք տուժողի գիտակցությունը և փորձեք վերականգնել այն
   - բարձր ձայնով կանչեք նրան մի քանի անգամ, և եթե նա չի արձագանքում, ապա **ուժեղ սեղմեք ականջի բլթակը, շփեք ականջները, պտտեք ականջաբլթակները, ապտակեք այտերը, ապտակեք պարանոցը ետևից,**
   - կարելի է զգուշությամբ տուժողի քթին մոտեցնել անուշադրի սպիրտով թույլ թաթախված բամբակ,
3. օգնեք, որ տուժողը լավ շնչի,

թուլացրեք նրա շնչառությանը խանգարող հագուստը, **արձակեք օձիքը**, որպեսզի նա կարողանա շնչել հեշտությամբ,

4. եթե տուժողի գիտակցությունը վերականգնվում է, **մի թողեք, որ նա քնի,**
5. **եթե տուժողի գիտակցությունը չի վերականգնվում, անհապաղ սկսեք**